


ՀՀ ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԽՈՍՆԱԿ ՀԱՅԿ ՀԱԿՈՒՅԱՆԸ ԵՆԹԱՐԿՎԵԼ Է ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

30.10.2015 15:34



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 19.10.2015թ. թիվ 195-Ա հրամանով ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի նկատմամբ հարուցվել էր աշխատանքային կարգապահական վարույթ:

Կարգապահական վարույթի հարուցման համար հիմք էր հանդիսացել զանգվածային լրատվության տարբեր միջոցներում, ինչպես նաև սոցիալական կայքերում լայն քննարկման առիթ դարձած xnews.am լրատվական կայքում 06.07.2015թ. «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են «գողանում»» վերտառությամբ և 30.07.2015թ. «Ո՞րն է այն շարժառիթը, որ ստիպում է նախկին ամբաստանյալին պատժել իրեն պաշտպանած հանրային պաշտպանին» վերտառությամբ հոդվածների հրապարակման հետ ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի առնչության կարթագիծը ստուգելու անհրաժեշտությունը:

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 2015թ. հոկտեմբերի 29-ին ընդունվել է «ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ 206-Ա հրամանը, համաձայն որի՝ **ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության և նրա նկատմամբ որպես կարգապահական պատասխանատվության միջոց՝ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը:**

Առաջարկվող նորություններ



19.10.2015 ՀԱՅԿ
ՀԱԿՈՒՅԱՆԻ ՆԿԱՏԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

```
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } }
```